ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի

1. Գնորդի անվանումը, գտնվելու վայրը և գնման առարկայի համառոտ բնութագիրը

Երևանի քաղաքապետարանը որը գտնվում է ք.Երևան, Արգիշտիի փող. 1 հասցեում, 09.08.2018թ. հայտարարել էր «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/31» ծածկագրով գնանշման հարցման, որի գնման առարկա է հանդիսանում կնքել Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերումը:

2. Գնման անհրաժեշտության և գնման ձևի ընտրությունը

Երևանի քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի կողմից ներկայացված գնման հայտը պայմանավորված է վերը նշված աշխատանքի ձեռքբերման անհրաժեշտությամբ: Նշված աշխատանքը նախատեսված է ձեռքբերել Երևան քաղաքի 2018թ. բյուջեով նախատեսվող ֆինանսական միջոցների հաշվին: Երևանի քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարը ներկայացրել է համապատասխան գնման հայտ՝ գնանշման հարցման ձևով վերոհիշյալ ապրանքը ձեռքբերելու համար:

3. Հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

4. Գնման վերաբերյալ ստացված հարցումներ և ներկայացված պարզաբանումներ չեն եղել:

5. Գնման հայտ ներկայացրած մասնակիցների անվանումները, հայտի բացումը և դրա գնահատումը

Գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և դրան համապատասխան հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակիցների անվանումը
1	«Էմ Ջի դիզայն» ՍՊԸ
2	«Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ
3	«Աքարա» ՍՊԸ

Մասնակիցների կողմից ներկայացված հայտում պահանջվող փաստաթղթերը առկա են,
Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Գնային առաջարկների ամփոփում

ՀՀ դրամ

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Մասնակցի անվանումը			
		Նախահաշվայի ն արժեք	«Էմ Ջի դիզայն» ՍՊԸ	«Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ	«Աքարա» ՍՊԸ
			առանց ԱԱՀ	առանց ԱԱՀ	առանց ԱԱՀ
1	Արցախի փողոցի 20-րդ շենքի բակային տարածքի և խաղահրապարակի հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և	4000000	235000	4000000	4000000

	տրամադրման աշխատանքներ				
2	Վարդաշեն 6 փողոցի 66-րդ շենքի բակային տարածքի և խաղահրապարակի հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ	6000000	235000	4000000	4000000

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Հ/Հ	1-ին տեղ զբաղեցրած մասնակից			2-րդ տեղ զբաղեցրած մասնակից	3-րդ տեղ զբաղեցրած մասնակից
	Մասնակցի անուն	Պայմ. Գին	ԱԱՀ		
1	«Էմ Ջի դիզայն» ՍՊԸ	235000	-	«Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ	«Աքարա» ՍՊԸ
2	«Էմ Ջի դիզայն» ՍՊԸ	235000	-	«Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ	«Աքարա» ՍՊԸ

Գնահատող հանձնաժողովը որոշեց armeps համակարգով վերջացնել գնահատումը, որից գնահատման հաշվետվության բեռնումից հետո (Evaluation) առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների մասով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

1-ին տեղ զբաղեցրած մասնակցի մասով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի տվյալների ճշտման մասին հարցում է կատարելվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, որի կողմից սահմանված ժամկետում տրամադրված եզրակացության համաձայն՝ «Էմ Ջի դիզայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտարարությունները համարվել են իրականությանը համապատասխանող:

Հնաձնաժողովը որոշեց՝ գնահատման թերթիկները լրացնել և հանձնել քարտուղարին

Հիմք ընդունելով գնահատման թերթիկները հանձնաժողովը որոշեց հաստատել գնահատման արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	տվյալները
1	«Էմ Ջի դիզայն» ՍՊԸ	բավարար

«Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց

1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել «Էմ Ջի դիզայն» ՍՊԸ-ին.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարել անգործություն, անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/31» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում.

-2018 թվականի սեպտեմբերի 4-ին Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարանի և Կատարող՝ «Էմ Ջի դիզայն» ՍՊԸ-ի միջև կնքվել է N «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/31» ծածկագրով ապրանքի գնման պայմանագիր: Պայմանագրի գինը կազմում է 470000 (չորս հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ:

Գնման առարկա է հանդիսանում Երեբունի վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերումը:

Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն եղել:

Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ և դրանց վերաբերյալ կայացված որոշումները չեն եղել:
Գնման գործընթացը կազմակերպվել է գնանշման հարցման կիրառմամբ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Գ. ՉԹՐՅԱՆ

ՀԱՄԱԿԱՐԳՈՂ

Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆ